

Սակայն այս տեղեկութեան հակառակ կան ուրիշ հաստատողութիւնք ստացուած լուրեր, որոնց համեմատ պապը երբեք ցանկութիւն չի ունեցել Զօլային տեսնելու, որը իւր «Լուրդ» վէպի լոյս տեսնելուց յետոյ յաճախ Հռոմ մէջ գալիս. իսկ միւս կողմից, Զօլան չէր կարող պապին տեսնել՝ մինչև որ հնազանդութեան երդում չտար և չհրաժարուէր «Լուրդ»-ի մէջ ասածներէն: Այս բանը անողը չէր Զօլան: Այսպիսով, որպէս հերետիկոս, նա չէր կարող յուսալ, թէ կաթոլիկութեան գլուխն իրեն կընդունէ:

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

Դեկտեմբեր 10/25-ին Վախճանուեց Անգլիական եկեղեցու գլուխ, Կետրըրըրի արքեպիսկոպոս, դր. Տէմպլը: Նա ծնուած էր 1821 թ.-ին. սկզբում դպրոցական գործին ծառայելով՝ 1858 թ.-ին Ռէօգրէյի համալսարանը ուսուցչանոցի տեսուչ էր կարգուել: Գլադստոնի գաղափարների հետևող և պաշտպան լինելով՝ նորա օգնութեամբ 1869 թ. Էքստէրի եպիսկոպոս դարձաւ: Թէպէտ նա շատ հակառակորդներ ունէր, բայց իւր անսովոր եռանդի և աննկուն աշխատասիրութեան շնորհիւ կարողացաւ հետզհետէ բոլորի յարգանքը վաստակել և այդպէս 1885 թ. Լոնդոնի եպիսկոպոսութեան, 1896-ին Կենտրըրըրի արքեպիսկոպոսութեան աթոռը բարձրանալ: Լինելով խիստ հմուտ դրպրոցական գործին՝ նա մեծ ազդեցութիւն է ունեցել Անգլիոյ ներկայ դպրոցական օրէնսդրութեան հրատարակութեան վերայ. այլ և առանձնապէս նպաստել է ողջախոհութեան գործի և արբեցութեան դէմ եղած ջանքերի շարանալուն:

— Անգլիական եկեղեցին նորերումս զրկուել է նաև իւր մի ամենայայտնի ներկայացուցչից, այն է Քենտրըրըրի կանոնիկոս նշանաւոր դիտնական պատմաբան Զորջ Բոլինտոնից: Նորան ամէնքը մեծ յարգանքով էին վերաբերում, որովհետև վերին աստիճանի համակրելի անձնաւորութիւն էր և ունէր շատ հաստատուն գաղափարներ ու ձգտումներ: Նա եռանդուն մասնակցութիւն էր ցոյց տալիս այսպէս կոչուած «Շարժուն գաշնադրութեան» գործին և մինչև վերջն էլ հաւատարիմ մնաց այդ ուղղութեան: Լինելով այսպէս նշանաւոր եկեղեցական գործիչ, նա միևնոյն ժամանակ Անգլիայի ամենայայտնի պատմագիրներից մէկն էր. նորա շատ գրուածքները մեծ չափով տարածուած են և յայտնի են ոչ միայն անգլիական գիտնական աշխարհում, այլ և Անգլիայից դուրս: Այս կողմից նշանաւոր է մանաւանդ նորա «Արևելեան աշխարհի եօթը մեծ պետութիւն»

ները՝ վերնագրով բազմահատոր շարադրութիւնը, որի մէջ նա զարմանալի վարպետութեամբ պատմում է արեւելեան հին աշխարհի բոլոր գլխաւոր պետութիւնների վիճակը: Նմանապէս յայանի է նորա անգլերէն լեզուով Հերոդոտի գիտնական հրատարակութիւնը, հաբուտ և թանկագին ծանօթութիւններով: Նա հրատարակել է նաև Աստուածաշնչի պատմութեան վերաբերեալ շարադրութիւններ, ինչպէս օր. այսպէս կոչուած «Աստուածաշնչի մարդիկ» անուան տակ նա ի լոյս է ածել իւր «Մովսէսը», «Ծսթեր և Նոեմին», ուր նկատելի են ոչ միայն նորա ընդարձակ գիտութիւնը, այլ և զարմանալի պատկերաւոր արտայայտութիւնը:

— Մի քանի տարի է արդէն, որ Ամերիկական եպիսկոպոսական եկեղեցին զբաղուած է իր համար մի շատ կարեւոր հարցով: Նա կամենում է այժմուան անունը փոխել: Պաշտօնապէս նա կոչուում է «Բողոքական եպիսկոպոսական եկեղեցի»։ Բայց այդ կոչման մէջ բոլոր բարեպաշտ անդամներին խորթ է թուում «բողոքական» բառը: Խորթութիւնը աւելի զգալի եղաւ այն ժամանակից, երբ կարիք զգացուեց վերականգնելու հին եկեղեցու ոգին ու ծէսերը. և այդ հարցը դարձնում է ամեն ժամանակ, երբ ընդհանուր ժողովներ են լինում դանադան քաղաքներում՝ սովորաբար իւրաքանչիւր երեք տարին մի անգամ: Աւելի մեծ շարժում եղաւ ներկայ տարուայ ժողովին, ուր ուղղակի դրուեց այդ հարցը և դորա քննութեան համար նշանակուեց առանձին մասնաժողով: Իրան յանձնած դործն ի գլուխ բերելու համար մասնաժողովը առանձին գրութեամբ դիմում է արել իւր եկեղեցու ղանադան ներկայացուցիչներին, որպէս զի վերջիններեւ կարծիքի հիման վերայ կազմեն ապագայ ընդհանուր ժողովին անելիք առաջարկութիւնը: Այժմ այդ ներկայացուցիչներից մի քանիսի յայտնած կարծիքներից երևում է, որ հարցը բաւական հասունացած է և ժողովուրդը ինքն է հետաքրքրուում նորանով: Մեծամասնութիւնը հակուած է այն կողմը, որ ջնջեն «բողոքական» բառը և դնեն տեղը եկեղեցու վիճակին յարմար մի ուրիշ անուն, օր. «Ամերիկական կաթոլիկ եկեղեցի» կամ ուղղակի «Ամերիկական եկեղեցի»: Այս հարցը ոչ միայն ձևական նշանակութիւն ունի, այլ և ամիսփում է իւր մէջ եկեղեցական մի որոշ ինքնադիտակցութիւն՝ ցոյց տալով թէ ինչպէս Ամերիկայի բնակչութեան մի մասը աւելի և աւելի հեռանում և ազատուում է բողոքականութեան ծայրահեղութիւններից: